Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Կատարող՝ 114 մսուր-մանկապարտեզի դաստիարակ
Անի Հարությունյան

Ղեկավար՝ Մ.գ.թ. Մարիաննա Ավագյան

ԵՐԵՎԱՆ - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1.1 Մեր հայրենիքը.....6

1.2 Սաների հայրենաճանաչողության կարեվորությունը.....9

2.1 Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

նախադպրոցական հիմնական հաստատությունում.....11

Եզրակացություն.....16

Առաջարկություններ.....18

Գրականություն ցանկ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել նրան:

Ռաֆֆի

Ով չի սիրում իր հայրենիքը, ոչինչ սիրել չի կարող:

Ջորջ Բայրոն

Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչողությունից: Հայրենաճանաչողության դաստիարակելը այսօրվա կարևորագույն խնդիրներից մեկն է: Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության գործընթացը անհրաժեշտ է սկսել նախադպրոցական հաստատություններում, որի հիման վրա էլ կձևավորվի նրանց հայրենաճանաչողությունը: Սերմանելով սեր հայրենիքի, քաղաքի. հայրենի բնության հանդեպ. ծանոթացնելով երկրի մշակույթին և պատմությունը' յուրաքանչյուր երեխա յուրովի է ընկալում իրեն շրջապատող միջավայրը: Այդ պատճառով էլ հայրենաճանաչողության ուսուցումը պետք է սկսել հայրենասիրական զգացմունքների ուսուցմամբ:

Հայերենաճանաչողությունը բարոյական և հայրենասիրական կրթություն է Հայրենաճանաչողության արժեքային համակարգի ձևավորումը պետք է դրվի ընտանիքում և մանկապարտեզում:

Հետազոտական աշխատանքի համար ընտրվել է «Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը» թեման, որը շատ կարևոր և արդիական, այն խնդրահարույց թեմա է բոլոր ժամանակներում: Հայրենիքը տարածք է, որտեղ որևէ ժողովուրդ կամ էթնիկ խումբ ապրում է կերտելով իր պատմությունը, կենցաղը, վարք ու բարքը, փոխելով իր սերունդը, ունենալով իր պետական կառուցվածքը՝ սերունդներին է ժառանգում իր քաղաքակրթության արժեքները: Աշխարհի յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր հայրենիքը: Դա այն տարածքն է, որտեղ նա դարեր շարունակ ապրել է՝ իր պատմությունը կերտելով: Հնում մարդիկ ապրել են բարենպաստ պայմաններ ունեցող վայրերում, տարածվել՝ զբաղեցնելով երկրագնդի գրեթե ողջ տարածքը: Բայց շատ քիչ ժողովուրդներ են ծնվել և ապրել իրենց

ծննդավայրում: «Հայրենիք», «պետություն», «ծննդավայր» հասկացություններն ունեն տարբեր բովանդակություններ: Որևէ ազգի կամ էթնոսի անդամը կարող է ծնվել ու ապրել իր հայրենիքից դուրս՝ այլ տարածքում, լինել ոչ իր հայրենի պետության քաղաքացին: Այդուհանդերձ, նրա հայրենիքն իր նախահայրերի բնօրրանն է: Այս գիտակցության աղավաղումը հանգեցնում է ազգային-էթնիկ ինքնագիտակցության երկփեղկմանը, որն էլ անխուսափելիորեն տանում է ուծացման և ձուլման՝ օտար հավաքականությունների մեջ: Օրինակ՝ Մեծ եղեռնից փրկված հայերի շատ սերունդներ, ովքեր անգամ չեն տեսել իրենց նախահայրերի հայրենիքը, այնուամենայնիվ, իրենց մեջ կրում են հայրենիքի՝ Հայաստանի կերպարը: Ինչպես ասել է Գարեգին Նժդեհը՝ **Հայրենիքից զատ, Հայրենիքից դուրս ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները: Հայրենիք մի սպասեք օտարից և ճակատագրից, եթե դա ձեր արյունով պաշտպանելու չափ հայրենասեր չեք:**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է

1. Սաներին ապագայում որպես Հայաստանի Հանրապետության կայացած և հայրենասեր քաղաքացի ձևավորելու անհրաժեշտությամբ,
2. հայրենի քաղաքի, բնության, երկրի հանդեպ սեր սերմանելու նպատակադրմամբ, ծանոթացնելով երկրի մշակույթին, կրոնին և պատմությունը՝ յուրաքանչյուր երեխայի իրեն շրջապատող միջավայրը յուրովի ընկալելու միջոցով:
3. բարդ թեմաները սաների մոտ հեշտությամբ և խաղային մեթոդներով ուսուցանման կարևորությամբ,
4. սաների մոտ հայրենաճանաչողության հանդեպ հետաքրքրության առաջացմամբ և այն ինքնուրույն իրականացնելու մոտիվացմամբ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.

1. Մանկավարժական մեթոդների միջոցով բարձրացնել նախադպրոցական հաստատության սաների հայրենաճանաչողության մակարդակը
2. Սաներին պատմել պատմամշակութային վայրերի մասին

3. Խնդրահարույց իրավիճակների ստեղծումը օգտագործել որպես սաների մոտիվացման և ստեղծագործական ու քննադատական մտածողության զարգացման միջոց:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

1. Կատարել գրական աղբյուրների հետազոտություն, այդ թվում նաև, համացանցային կայքերի ուսումնասիրություն «Հայրենաճանաչողության կարևորությունը» թեմայի վերաբերյալ:
2. Կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ, մեթոդներ, որոնք կբարձրացնեն թեմայի արդյունավետությունը:
3. Ստուգել առաջարկված մեթոդների արդյունավետությունը պրակտիկայում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.

1. Գրական աղբյուրների և համացանցային տեղեկությունների ուսումնասիրում և հետազոտություն,
2. Թեմայի վերաբերյալ նյութերի ընթանրացում, մշակում և համակարգում,
3. Փորձի նկարագրում, իրականացում, դիտարկում, ներկայացում, եզրահանգում,
4. Շնորհանդեսի ներկայացում՝ որպես թեմայի արդյունավետության բարձրացման միջոց:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ.

- Ներածություն
- Գլուխ 1
- Գլուխ 2
- Եզրակացություն
- Գրականության ցանկ

1.1 ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Հայրենասիրական դաստիրակությունը հայրենիքի հանդեպ սիրո դաստիրակությունն է: Նրան նվիրվածությունը նրա հանդեպ պատասխանատվությունը:

Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիրակության խնդիրները բավականին շատ են: Հիմնականը սովորում են սիրո զգացում իր հայրենի բնության, ընտանիքի և տան համար, ինչպես նաև ուղղակիորեն այն երկրի պատմությունն ու մշակույթին որտեղ նա ապրում է:

Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր երեխա զգում է զգացմունքների օգնությամբ իրեն շրջապատող իրականությունը: Ահա թե ինչու ցանկացած աճող սերնդի հայրենասիրական դաստիրակությունը պետք է սկսվի սիրո զգացումն իր հայրենի քաղաքի, բակի, մանկապարտեզի, երկրի նկատմամբ: Հայրենասիրություն սերմանելու գործընթացը գաղափարական աշխատանքի անբաժանելի մասն է ու հիմնական խնդիրներից մեկը:

Դաստիրակի և ծնողի խնդիրն է երեխաների մեջ հնավառինս արբացնել սերը հայրենի հողի նկատմամբ: Նրանց մեջ ձևավորել այնպիսի բնավորության գծեր, որոնք կօգնեն նրանց դառնալ արժանավոր մարդ և իրենց երկրին արժանի քաղաքացի:

Մեր հայրենիքն ունի դարավոր պատմություն, նրա անունը հիշատակվում է այնպիսի հնավուրց քաղաքակրթությունների կողքին, որոնցից շատերը հիմա գոյություն չունեն, իսկ Հայաստանը մինչև հիմա կանգուն է, կանգուն է չնայած այն ամենին, ինչն նրա հետ կատարվել է այդ դարավոր պատմության ամենատարբեր դրվագներում: Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ, որը հոգևոր խորը արժեքներ է փոխանցում: Սկիզբ առնելով մ.թ.ա. մոտ 4000-ական թվականներից՝ այն քաղաքակրթության ամենահին կենտրոններից մեկն է: Հայաստանն ու հայ ժողովուրդը շատ կորուստներ է ունեցել, նրա պատմությունը մի մեծ մատյան է ողբերգության, որի էջերին հայ ժողովրդի ցավն ու տառապանքն է: Բայց անկախ ամեն ինչից, մենք կանք, հայն շարունակել է գոյություն ունենալ այդ հինավուրց ժամանակներից մինչև այսօր: Այս փոքրիկ և արևոտ երկրում շատ տեսարժան վայրեր կան՝ Գառնու տաճարը, Գեղարդը, Էջմիածինը, Խոր Վիրապը, Ամբերդը, Տաթևի

վանքը, Սևանա լիճը: Այն հինավուրց մշակութային ժառանգություն ունի, հարուստ է պատմական եկեղեցիներով, վանքերով, հուշարձաններով, սարերով ու ձորերով, որոնք մեր հայրենիքի պատմության լուռ վկաներն են:

Հայաստանի պատմության մեծ գիրքը տառապանքի բազմաթիվ էջեր ունի: Եվ այնուամենայնիվ, չնայած այս բոլոր փորձություններին, որոնք կարող էին լրջորեն սպառնալ հայ ժողովրդի գոյատևմանը, հայերը ոչ միայն գոյատևեցին իրենց պատմության բոլոր փորձություններից, այլև ստեղծեցին ամենայուրահատուկ և հետաքրքիր քաղաքակրթություններից մեկը: Հային տված է ապրել զրկանքներով: Նա դարերի խորքով է անցել ու եկել, հասել է մինչև այսօր: Հասել է, բայց այն ամենը, ինչ ինքն է տեսել, միայն ինքը՝ Հայը գիտի: Մենք կորցրել ենք այն ամենը, ինչն սիրել ենք, ինչն մեզ համար թանկ է եղել: ՈՒ այդ թանկերի մեջ է նաև Արարատը՝ բիբլիական լեռը, հայի խորհրդանիշն ու սրբությունը, որն այնքան մոտիկ է, որ կարծես, եթե երկարացնես ձեռքդ, կդիպչես նրան, ու միևնույն ժամանակ այնքան հեռու է, որ ինչքան էլ գնաս՝ չես հասնի, իսկ եթե հասնես էլ, միևնույնն է, քոնը չի: Այն այնքան օտար է, բայց այնքան հարազատ: Դարեր շարունակ այն հայի խոհրդանիշն է եղել, նրա սպիտակ, ձյունածածկ գագաթները՝ Սիսն ու Մասիսը լուսավորել է հայի հոգին, այն մի լուսավոր կանթեղ է, ճրագ, որ ջերմացրել է հայի հոգին: Բայց այսօր արդեն մեկ դար է ու ավելի, ինչ գերության մեջ է, մեկ դար է, ինչ հայն կարոտով է նայում Արարատին ու ամեն անգամ հոգվոց հանում, քանզի այդքան հարազատ լինելով՝ իրենը չէ, այն թշնամունն: Ամեն անգամ նայելուց այն հիշեցնում է հայերի կյանքում մեծ տեղ գրաված ողբերգության մասին:

Ես հպարտ եմ... Անսահման հպարտ եմ, որ հայ եմ, որ հայ են ծնողներս, տատս, պապս, նախնիներս: Հպարտ եմ, որ երակներովս հոսում է հայի արյունը, ու ծնունդն եմ այն հայ ազգի, որն չունի պարտվելու ունակություն, ով միշտ պայքարել է ու շարունակում է պայքարել անարդարության դեմ, ով պատրաստ է միավորվել միևնույն գաղափարի շուրջ ու իբրև Փյունիկ հառնել մոխիրների մեջից, ուղղել ծռված մեջքը և շարժվել առաջ դեպի պայծառ ապագա:

Հայ ազգն ևս մեկ անգամ ապացուցեց, որ միավորվելով կարող է պայքարել իրենից շատ մեծաթիվ և ուժեղ թշնամու դեմ, պահել իր արժանի գոյությունը, ու նրա միասնության դեմ անզոր են բոլորը: Հայ երիտասարդությունն ապացուցեց, որ իր քաջ

ու անպարտելի նախնիների արժանի հետնորդն ու ժառանգն է, և ինչպես ասում էր Նժդեհը՝ «տվեք ինձ ներցեղային բարոյականով առաջնորդվող մի հատիկ սերունդ, և ես կապահովեմ Ազգիս տեղը արևի տակ»:

Նախադպրոցական տարիքի երեխաների ծանոթությունը հայրենի քաղաքի, տարածաշրջանի հետ երկար և բարդ գործընթաց է ։ Դրական արդյունքի կարելի է հասնել միայն համակարգված աշխատանքով: Երեխաներին պետք է սովորացնել սիրել իրենց քաղաքը հասկացնել որ իրենց քաղաքը հայէենիքի մի մասն է:

Հայրենասիրական դաստիրակության համար նախադպրոցական ուսումնական հաստատությունները օգտագործում են աշխատանքի տարբեր մեթոդներ և ձևեր՝հաշվի առնելով երեխայի աշխարհայացքը: Այդ նպատակով արդյունավետ և հետաքրքիր աշխատանքներում ներառվում են զբոսանքներ, էքսկուրսիաներ, դիտումներ, դիտարկումներ, բացահայտումներ որոնք ավելի կմոտիվացնեն երեխաներին սյուն թեմայի ընկալմանը և յուրացմանը:

Հայրենասիրական զգացմունքների ձևավորումն ավդլի արդյունավետ է եթե մանկապարտեզը սերտ կապ հաստատի ընտանիքի հետ: Ընտանիքի հետ աշխատանքում մանկապարտեզը պետք է ապավինի ծնողներին որպես երեխայի անհատականության ձևավորման իրավահավասար մասնակիցներ:

Հայրենաճանաչողության դաստիրակությխն նպատակն է կրթել հայրենասեր ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին: Ավագ նախադպրոցական տարիքում զարգանում են բարձր սոցիալական մոտիվներ և զգացմունքներ:

Այս ազդեցության արմատները գտնվում են ժողովրդի լեզվում որ երեխան սովորում է երգերից, խաղերից տպավորություններով հայրենի բնության աշխատանքի սովորույթների մասին,որում նա ապրում է:

1.2 ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայրենաճանաչողության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիս իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կեցվածքը: Հայրենաճանաչողությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ նախադպրոցական կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա սաների հայրենաճանաչողության ձևավորումն կարևորությունը: Հայրենաճանաչողության նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սաների գիտելիքների, պատմական ուղու,նրա սոցիալական, հոգևոր և բարոյական փորձի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելուն, պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն: Ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ դասընթացի բարդացում և ծանրաբեռնում արտածրագրային նյութերով: Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Ուսումնական ծրագրի բովանդակությունը, դասի ուսումնական դաստիրակչական և զարգացնող խնդիրները, երեխաների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները: Երեխաների տարիքը, նրանց գիտական մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնաբումը, ինչպես նաև դասապրոցեսի ժամանակ դաստիարակի օգտագործած մեթոդներն ու հնարները: Նույն խմբի սանն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողություններ, գործում է անկաշկանդ, ինչն էլ

նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է երեխայի ինտելեկտուալ պատրաստակամությունը, դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն, ինանակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Հատկապես նախադպրոցական տարիքում առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք փոքրիկի նկատմամբ: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել ,որ երեխայի արժեքայի համակարգի ձևավորումը ժամանակակից կրթության գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Հայրենաճանաչողության ուսուցման գործընթացում, պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի մեթոդների,որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը,ուսումնադաստիրակչական նպատակը: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սաների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն: Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ: Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության -հանրագումարային դասերը:

2.1 ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հետազոտության ժամանակ կիրառել եմ ԽԻԿ- համակարգը, իրականացրել եմ ավագ խմբի երեխաների հետ:

Պարապմունքը արձանագրվել է մեթոդիստի կողմից:

Աշխատանքս պլանավորել եմ համալիր ծրագրով, հաշվի առնելով տարիքային չափորոշչային զարգացման ոլորտը:

Միջավայրը -խմբասենյակ

նյութերը - դրոշ, զինանշան, մանր և խոշոր կառուցողականներ, գլուխկոտրուկներ, նկարներ տեսարժան վայրերով, կրծքանշաններ:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

Թեման - Իմ հայրենիքը Հայաստանն է:

Պարապմունքի տեսակը՝ զրույց (2-3) պարապմունքի ընթացքում:

Նպատակը - Ծանոթացնել և իրազեկոլ հայրենիքի քարտեզի, ՀՀ դրոշի, զինանշանի, օրհներգի մասին:

Զարգացնել - Երեխաների կապակցված խոսքը, հաղորդակցումը, մտքերի փոխանակումը:

Ընթացքը- Խթանման փուլ

Առավոտյան հանդիպում- երեխաներ երբ դուք առավոտյան եկաք մանկապարտեզ ճանապարհին ի՞նչ շենքեր և շինություններ տեսաք:

Այդ բոլորը կառուցված են մեր հայրենիք հողի վրա: Այժմ եկեք մենք էլ միասին մանր և խոշոր կառուցողականներով կառուցենք մեր տունը, որտեղ ապրում ենք:

Մեթոդ՝ «Մտածիր-զու՛յգ կազմիր - կիսվիր» - ռազմավարության միջոցով երեխաները մտքեր են փոխանակում:

Երեխա պատասխան- իմը երկհարկանի է,

- Ես ապրում եմ բարձրահարկ շենքի 3-րդ հարկում:

- Մեր շենքի բակում կա խաղահրապարակ և լողավազան:

Յուրաքանչյուր երեխա իր զույգի լսածին տալիս է մեկ հարց:

Ե.պ.- Ձեզ թույլ են տալիս լողավազանում լողալ:

Ե.պ.- Ոչ

Արտահայտվում են խմբի երեխաները իրենց կարծիքները:

Իմաստի ընկալման - «Բարձրաձայն ընթերցանություն»

Երեխաները նստել են կիսաշրջանաձև .

Ես գրատախտակին տեղադրում եմ մեր հայրենիքի տեսարժան վայրերի պատկերներով նկարներ և երեխաներին առաջարկում մի պատմություն հորինել այս նկարի շուրջ:

Ե.պ- Ես ծնողներիս հետ ամռանը հանգստացել եմ Սևանում:

- Քույրիկիս դասարանի հետ գնացել եմ տառերի պուրակ:

- Այսօր Էրեբունի թանգարանի մոտով եմ անցել:

Երեխաների պատասխաներից հետո ընթերցեցի Սարմենի Հայրենիք բանաստեղծությունը և յուրաքանչյուր հատվածի մասին փակցրեցի համապատասխան նկարը (մեծ և փոքր սարեր, դաշտ, գետ, արև, ծաղիկ, ժպիտ, գիրք, մանկապարտեզ, գնդակ, ինքնաթիռ, աստղեր):

Զրույց բանաստեղծության շուրջ. Հայրենիք Սարմեն

Երեխաներին բաց հարցեր եմ ուղղում:

- Ինչի մասին էր պատմում հեղինակը բանաստեղծության մեջ:

Ե.պ.- ...

Ի՞նչ է նշանակում Հայաստան բառը մեր բոլորի համար:

Ե.պ.- Հայաստանը իմ տունն է:

- Իմ մանկապարտեզը

- Իմ ծննդավայրը:

Դ.- Ինչպես են անվանում մեր հանրապետությունը:

Ե.պ.- Հայաստանի Հանրապետություն:

Դ.- Երեխաներին ցուցադրեցի աշխարհագրական քարտեզը, ցույց տվեցի մեր Հայաստանը ասելով.

- Եկեք քարտեզի վրա ցույց տանք Հայաստանի տարածքը և պատմենք ինչեր կան մեր երկրում:

Ե.պ.- բարձր և ցածր լեռներ, Սևանա լիճ, գետեր, սարեր:

- Ուշադիր դիտեք քարտեզը և որոշեք, որ գույներն են գերիշխում Հայաստանի տարածքում:

Ե.պ.- շականակագույնը սարերն են , կապույտը – գետերը, լճերը - կանաչը-դաշտերը և անտառները:

Ֆիզկուլտ դադար- «Շոգեքարշ շարժվիր»

Երեխաները կատարելով համապատասխան շարժումները հասան աթոռներին:

Խաղ՝ «Ճանաչիր որ՞ն է քոնը»

Գրատախտակին փակցրեցի մի քանի երկրների դրոշները և զինանշանները (Ռուսաստան, Վրաստան, Ֆրանսիա, Հայաստան)

- Գտնել քո հայրենիքը խորհրդանշող նշանները և ներկայացնել:

- Ի՞նչ են խորհրդանշում այս գույները

Ե.պ.- կարմիրը - կակաչները, այրունը , ուրախությունը

կապույտը - երկինքը, ջրերը, լճերը

ծիրանագույնը - ցորենի հասկը, լեռները աշնանը, ծիրանը:

Ես ամփոփում եմ երեխաների պատասխանը:

Հայաստանի դրոշի գույներն են՝ կարմիրը -մեր ժողովրդի հաղթանակն է, կապույտը- Հայաստանի պարզ երկինքը, ծիրանագույնը- մեր ժողովրդի ստեղծագործ աշխատանքը:

Երեխաներին ցույց եմ տալիս մանկապարտեզի բակում ամրացված եռագույնը:

Առաջարկում եմ թվել ինչ պատկերներ են տեսնում զինանշանի վրա:

Ե.պ.- առյուծ, արծիվ, լեռ , վահան

-Այո, դուք ճիշտ եք, այստեղ պատկերված են այն խորհրդանիշները ինչով հայտնի է մեր երկիրը և միշտ պաշտպանության կարիք է զգացել:

Երրորդ խորհրդանիշը՝ - Օրհներգն է:

Օրհներգը լսելիս կամ երգելիս ոտքի ենք կանգնում և աջ ձեռքը սեղմում սրտին: Դա նշանակում է, որ սիրում ու հպարտանում ես քո հայրենիքով:

Երգի ունկնդրում օգտագործվել է ձայնարկիչ:

Կշռադատման փուլ- Երեխաներ ձեզ դուր եկավ այսօրվա մեր զրույցը:

Ի՞նչ նոր բան իմացանք:

Ե.պ.- Ես իմացա, որ Հայաստանի քարտեզը նման է աղջկա:

- Քարտեզի վրա տեսա կապույտ գույնով Սևանա լիճը:

-Ես արդեն կարող եմ ասել ի՞նչ է պատկերված զինանշանի վրա:

Օրվա II կես

Երեխաներին բաժանել եմ 4 խմբի: Ամեն խմբին տրամադրել եմ գլուխկոտրուկ նկարներ՝ Երևանի տեսարժան վայրերով (ՀՀ հրապարակ, Էրեբունի թանգարան, Սասունցի Դավթի արձանը , Զվարթնոց օդանավակայանը):

Առաջադրանքը ճիշտ կատարելու արդյունքում բոլորը խրախուսվեցին եռագույն դրոշի կրծքանշանով:

Դաստիարակ - ծնող - երեխա կապը

Ծնողներին առաջարկեցի ստեղծել պաստառ «Մեր չքնաղ հայրենիքը» թեմայով:

Ծնողներին առաջարկել եմ տանը երեխաների հետ դիտել <<Անահիտ>> և «Սասունցի Դավիթ» մուլտֆիլմը:

Իմ հետազոտության արդյունքում- նկատեցի, որ ծնողները պատմել և այցելություններ են կատարել մեր հայրենիքի պատմական և տեսարժան վայրերը: Սաների ակտիվ պատասխաններից զգացի նրանց սերն ու ուշադրությունը իրենց Հայրենիքի նկատմամբ:

Հետազոտության վերջնարդյունքը

- Կհորինեն նկարների շուրջ նոր պատմություններ հայրենիքի մասին:
- Կնկարազարդեն ուրվագծված տեսարժան վայրերը:
- Կստանան նոր հանձնարարություններ կառուցողականներով կառուցելու:
- Կայցելեն պատմամշակույթային կենտրոն:
- Կծանոթանան հայրենիքի պատմության հետ:

Մեթոդիստի դիտարկում

- Թեմատիկ զրույցի միջոցով զարգացրեց երեխաների կապակցված խոսքը, ստեղծագործական միտքը:
- Դաստիարակեց սիրո և հպարտության զգացում:
- Սովորեցին օգտագործել պատկերավոր բառեր և արտահայտություններ հայրենիքի մասին:
- Պարապմունքի ընտրված դիդակտիկ նյութերը համապատասխանում էր թեմային:
- Դասդտիարակի կողմից շատ կարևոր թեմա էր ընտրված, քանի որ հայրենաճանաչման առաջին սերմերը ցանվում են նախադպրոցական հաստատությունում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայրենասիրական զգացմունքների ձևավորումն ավելի արդյունավետ է, եթե մանկապարտեզը սերտ կապ հաստատի ընտանիքի հետ:

Նախադպրոցականներին միջավայրին ծանոթացնելու գործընթացում ընտանիքը ներգրավելու անհրաժեշտությունը բացատրվում է հատուկ մանկավարժական կարողություններով, որոնք ունի ընտանիքը: Նրանց սոցիալական կողմնորոշումը բարենպաստ պայմաններ է ստեղծում ավելի բարձր բարոյական զգացմունքների դաստիարակության համար:

Հայրենաճանաչողության դաստիարակության մեջ հաջողության կարելի է հասնել, եթե մեծերն իրենք իմանան և սիրեն իրենց երկրի, քաղաքի կամ գյուղի պատմությունը: Մենք պետք է կարողանանք ընտրել այն գիտելիքները, որոնք հասանելի են նախադպրոցական տարիքի երեխաներին, ինչը կարող է երեխաներին ոգևորել և հպարտանալ:

Այս հետազոտական աշխատանքի թեման, անկասկած շատ մեծ նշանակություն ունի երեխայի համար: Հայրենաճանաչողության կարևորության մասին կարելի է խոսել երկար: Ուսումնասիրելով հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական պատմությունը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունները, ձեռքբերումները, ստեղծած արժեքների և համամարդկային նվաճումների, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարությունների ու կորուստների մասին երեխաների հիշողության մեջ ամրապնդվում է հայրենասիրությունը: Ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթական բոլոր ոլորտներում պետք է դրվի հայրենաճանաչողության կարևորության հարցը: Պետք է սիրել հայրենիքը, հնարավոր չէ այն սիրել, հայրենիքը սիրելու եւ ճշմարիտ նկարագրով քաղաքացի լինելու միակ պայմանը հայրենիքը ճանաչելն է: Շատ կարեւոր է, որ մանկապարտեզներում ու դպրոցներում հայրենաճանաչության դասեր անցկացվեն, որի արդյունքում մենք կունենանք հայրենասերներ: Այսօր հանրակրթական դպրոցներում և նույնիսկ համալսարաններում հայրենաճանաչության վերաբերյալ դասընթացները շատ ցածր հիմքերի վրա են: Այս ամենը վտանգավոր հետեւանքներ կունենա, եթե ամեն ինչ այս կերպ շարունակվի: Հայրենաճանաչության

բացակայությունը մեզ շատ մեծ արհավիրքների կորող է հանգեցնել: Փոքր է մեր հայրենիքը ու փոքր ազգ ենք, բայց մեծ պատմություն ունենք,բարձր մարդկային արժեքներ: Թեև քիչ ենք, բայց աշխարհի ամեն մի անկյունում ունենք շատ հայտնի հայեր,ովքեր իրենց գործնեությամբ միշտ բարձր են պահում հայ ազգի պատիվը:Քիչ ենք, բայց ամեն մի դժվար պահին միասնական, մի մարդու նման ենք դառնում ու ավելի ուժեղ, քան ցանկացած երկիր:

Քիչ ենք, այո, բայց դարերի ընթացքում կարողացել ենք պահպանել մեր ազգը, կրոնը, մեր գիր ու գրականությունը, մեր մշակույթը ու թույլ չենք տվել ոչ ոքի խլել մեզանից այդ հարստությունը, երբեք չենք կորցրել հույսն ու հավատը,մեր մարդկային արժեքները, որոնք սերնդից սերունդ փոխանցվել է հայ ազգի զավակներին, մեր անվախ սերնդին, որոնց երակնեով հայի թունդ արյունն է հոսում՝ փոխանցված հայ քաջերից, որոնք կյանքի գնով պաշտպանել են սուրբ հայրենիքի սահմանները ու ոչնչացրել յուրաքանչյուրին, ով համարձակվել է ոտք կոխել հայրենիքի սահմաններից ներս, իր ձեռքից խլելու մեր մարտիկների անգին արյունով գնված տարածքը:

Այսպիսով արդի ժամանակաշրջանում հայրենաճանաչողությունը դարձնենք մեր հիմնաքարը և շարժվենք առաջ: Փորձենք նոր մեթոդներ կիրառել հայրենասիրական պարապմունքների ընթքց-քում, որպեսզի արդյունքը լինի մատչելի, դյուրին և արդյունավետ:

Հայրենասիրությանը նվիրված պարապմունքները արթուն են պահում հայրենասիրական զգացմունքները ու հետաքրքրասիրությունները անցյալի ու ներկայի նկատմամբ, ինչպես նաև՝ սերմանում է այն գաղափարը, որ հայրենիքը միակն է ինչպես մայրը:

Եթե երեխան վաղ հասակից է ծանոթանում իր հայրենի երկրին, իր բնօրրանին, ապա հայրենաճանաչողությունը ու հայրենասիրությունը կայուն բնավորության է վերածվում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով նշվածից՝ առաջ են եկել հետևյալ առաջարկությունները

❖ Մենք պետք է օգտագործենք բոլոր տեսակի բանահյուսությունները՝ հեքիաթներ, ասացվածքներ, երգեր, տաղեր, պարեր: Ժողովրդական արվեստում պահպանվել են բարոյական արժեքներ բարության, գեղեցկության, ճշմարտության, քաջության, աշխատասիրության և հավատարմության գաղափարների շուրջ:

❖ Շրջապատող առարկաներ, որոնք առաջին անգամ են արթնացնում երեխայի հոգին, նրա մեջ գեղեցկության զգացումը, հետաքրքրություն են սերմանում, պետք է լինեն ազգային: Սա օգնում է երեխաներին վաղ տարիքից հասկանալ, որ նրանք հայ ժողովրդի մի մասնիկն են:

❖ Խաղանք տարբեր բնույթի խաղեր վերհիշենք մեր պապերի խաղերը, մոռացության չտանք, խաղալով սովորենք և խաղի միջոցով ամրապնդենք ազգային պատկանելիության գիտակցումը:

Հայրենիքը սիրում են ոչ թե նրա համար, որ մեծ է այլ նրա համար, որ քոնն է:

Մենեկա

Հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ և կործանվում դրա բացակայությունից:

Գարեգին Նժդեհ

Մեր ազգն առանց հայրենասիրության՝ ինչպես մարմինն առանց հոգի…

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նժդեհ, Գ.. (2006). Հատընտիր. «Ամարաս», ՀՀԿ հրատ. Եր.:
2. Հարությունյան Մ., Միքայելյան Գ. Նժդեհի ուսմունքը սերունդների հայրենասիրական դաստիրակության մասին: Գիտական հոդված, Հասարակական գիտությունների հանդես: Ե. 2023թ.107-114 էջ
3. Сухомлинский В.А. Сердце отдаю детям. М.: Концептуал, 2018 – 320с
4. Белая К. Ю. Մեթոդական աշխատանք նախադպրոցական ուսումնական հաստատությունում. М.: TC Sphere, 2008:
5. Волобвуева Л. М. Նախադպրոցական ուսումնական հաստատության ավագ ուսուցչի աշխատանքը ուսուցիչների հետ: М.: TC Sphere, 2008:
6. Давидова О. И., Майер А. А., Богословец Л. Г. Ինտերակտիվ մեթոդներ նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական խորհուրդների կազմակերպման մեջ: Հրատարակչություն «Մանկություն - Մամուլ», 2009 թ.
7. Елизова Н. В. Թեմատիկ ուսուցիչների խորհուրդներ նախադպրոցական ուսումնական հաստատությունում. նախապատրաստում և վարում / Н. В.Елизова.- Ростов Н / Д: Phoenix, 2012. – 216
8. Լուկինա Լ. Ի. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական անձնակազմի հետ աշխատանքի կազմակերպչական ասպեկտները. М.: TC Sphere, 2010:
9. Մայեր Ա.Ա. Գործնական նյութեր նախադպրոցական կրթական կազմակերպությունում Դաշնային պետական կրթական ստանդարտի բովանդակությունը յուրացնելու վերաբերյալ դիագրամներում և աղյուսակներում: Ռուսաստանի մանկավարժական ընկերություն Մ.2014)